Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր ____ Գ. Մակիչյան
"22" հունիսի 2011թ.

Հաստատված է համալսարանի
գիտական խորհրդի 2011թ.
հունիսի 21 -ի որոշմամբ (արձ. № 3)

Կարգ
Հյուսիսային համալսարանում մագիստրատուրայի ընդունելության

1. Հյուսիսային համալսարանի մագիստրատուրա կարող են ընդունվել Հյուսիսային համալսարանի, պետական ու ոչ պետական հավատարմագրված մյուս բուհերի, ինչպես նաև չհավատարմագրված ոչ պետական բուհերի հավատարմագրված մասնագիտությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

2. Համալսարանի մագիստրատուրայում ընդունելությունը կազմակերպում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ստեղծվող ընդունող հանձնաժողովը՝ համալսարանի ռեկտորի գլխավորությամբ:

Ընդունող հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել համալսարանի պրոռեկտորները, ռեկտորի օգնականը, ուսումնական և որակի վարչությունների պետերը, դեպարտամենտների (ֆակուլտետների) դեկանները, թողարկող ամբիոնների վարիչները:

3. Համալսարանի մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

ա) դիմում՝ համալսարանի ռեկտորի անունով,

բ) բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմը,

գ) դիպլոմի միջուկը,

դ) 4 լուսանկար 3x4 սմ չափերի,

ե) անձնագրի պատճենը:

4. Բազային մասնագիտական կրթությամբ դիմորդները իրենց մասնագիտության գծով մագիստրատուրա են ընդունվում հարցազրույցի միջոցով, այլ մասնագիտությունների հիմքի վրա ընդունվողները քննություններ են հանձնում մագիստրատուրայում իրենց ընտրած մասնագիտության գծով բակալավրիատի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման համար նախատեսված առարկաներից՝ նույն ծավալով:

5. Մագիստրատուրայի դիմորդների հետ հարցազրույցների և քննությունների անցկացման նպատակով համալսարանի ռեկտորի հրամանով ըստ մասնագիտությունների ստեղծվում են հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են պրոռեկտորը, ռեկտորի օգնականը, ուսումնական վարչության պետը, տվյալ դեպարտամենտի (ֆակուլտետի) դեկանը, թողարկող ամբիոնի վարիչը, ամբիոնի առաջատար դասախոսներ:

6. Դիմորդների հետ անցկացվող հարցազրույցների արդյունքները գնահատվում են եռաստիճան սանդղակով՝ «բարձր», «դրական» և «բացասական»:

Դիմորդների հանձնած քննությունների արդյունքները յուրաքանչյուր առարկայից գնահատվում են համալսարանում վերջին ուսումնական տարում ամփոփիչ ատես-

տավորման ժամանակ շրջանավարտների գիտելիքների գնահատման համար կիրառված սանդղակով:

Հարցազրույցից «բացասական» կամ քննական որևէ առարկայից «անբավարար» (կամ գիտելիքների գնահատման այլ սանդղակով դրան հավասարեցված) գնահատական ստացած դիմորդները համալսարանի մագիստրատուրա չեն ընդունվում:

7. Հարցազրույցի կամ ընդունելության քննությունների հավասար արդյունքների դեպքում հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ ցուցանիշները՝

ա) գերազանցության դիպլոմը,

բ) պետական ավարտական քննությունների կամ ավարտական աշխատանքի գնահատականները,

գ) դիպլոմի միջուկում գրանցված առարկաների միջին գնահատականը,

դ) տպագրված գիտական աշխատանքները, գիտաժողովներում կարդացված զեկուցումները կամ դրանց թեզիսները:

8. Դիմորդին մագիստրատուրա ընդունելու մասին որոշումը կայացնում է համալսարանի ընդունող հանձնաժողովը՝ հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի և քննական հանձնաժողովների նախագահների ներկայացմամբ:

9. Համալսարանի մագիստրատուրա ընդունվածների հրամանագրումը համալսարանի ռեկտորի կողմից կատարվում է ուսանողի տարեկան ուսման վարձի առնվազն 50 տոկոսը վճարելուց հետո:

10. Մագիստրատուրայի ուսանողի և համալսարանի իրավական փոհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքվող պայմանագրով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: